

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ԿԻԵՎՈՒՄ

Մարտի 28—1 ապրիլին Կիևի «Ռուս» հյուրանոցում գումարվեց Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի Աշխատանքային կոմիտեի հերթական նստաշրջանը՝ Ռուսական ուղղափառ Եկեղեցու հրավերով: Նրա բնաբանն էր՝ «Եկեղեցիների և քրիստոնյաների խաղաղասիրական պարտականություններն աշխարհի ներկա դրության պայմաններում»:

Ներկա էին աշխարհի տարբեր երկրների (Սովետական Միություն, ԱՄՆ, Կանադա, Մեքսիկա, Պուերտո Ռիկո, Կուբա, Անգլիա, Ֆրանսիա, Հոլանդիա, Հունաստան, Արևմտյան և Արևելյան Գերմանիա, Հունգարիա, Ռումինիա, Բուլղարիա, Լեհաստան, Չեխոսլովակիա, Եթովպիա, Թանզանիա, Անգոլա, Մոզամբիկ, Մադագասկար, Հընդկաստան, Ցրի Լանկա, Ավստրալիա և այլն) Եկեղեցիների ավելի քան 70 պատգամավորներ, հյուրեր, լրագրողներ:

Մայր Աթոռի կողմից նստաշրջանի աշխատանքներին մասնակցում էր Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, ԽՔԿ Մերձավոր և Միջին Արևելքի հատուկ հանձնաժողովի նախագահ տիար Հովհաննես Թոփուզյանը:

Նստաշրջանի բացումը կատարեց ԽՔԿ նախագահ եպիսկոպոս դոկտ. Կարոլի Տոթը: Կիևի և Գալիցիայի միտրոպոլիտ դոկտ. Ֆիլարետը, հանուն Ռուսական ուղղափառ Եկեղեցու ողջունելով ներկաներին, հրապարակեց Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պիմեն պատրիարքի ուղերձը, որով հաջողություն էր մաղթվում նստաշրջանի աշխատանքներին: Այնուհետև հաջորդաբար լսվեցին մի շարք կարևոր զեկուցումներ:

Դոկտ. Կարոլի Տոթի ընդարձակ զեկուցումը նվիրված էր միջազգային քաղաքական ներկա դրության վերլուծությանը: Կանգ առնելով սպառազինությունների մրցավազքի վրա, նա հանդես եկավ ռազմամոլների պրոպագանդած այն կեղծ դրույթի դեմ, որ իբր «ազգերի անվտանգությունը հնարավոր է երաշխավորել միայն զինված ուժերով»: Մինչդեռ, ասաց նա, զինարշավը, քամուն տալով հսկայական միջոցներ, տնտեսական ու քաղաքական անկայուն վիճակ է ստեղծում հենց այն երկրներում, որոնց ղեկավարները տարված են ավելի ու ավելի մեծ քանակությամբ արդիական զենքեր կուտակելու մոլուցքով:

Այդ և մյուս (ԽՔԿ-ի ընդհանուր քարտուղար Լ. Միրեժովսկու, Հնդկաստանում քրիստոնեական գիտելիքների տարածման ընկերության ընդհանուր քարտուղար Հենրի Դեվադասի և ուրիշների) զեկուցումներում առաջ քաշված հարցերի շուրջը տեղի ունեցավ մտքերի աշխույժ փոխանակություն: Ելույթ ունեցողների ուշադրության կենտրոնում էին միջազգային լարվածության թուլացման, զինաթափման, կայուն խաղաղության, ժողովուրդների ինքնորոշման, սովի ու թշվառության և այլ հրատապ հարցեր: Առանձնահատուկ ուշադրություն նվիրվեց Հարավային Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում, Մերձավոր և Միջին Արևելքում տիրող քաղաքական իրադրությանը:

Մայր Աթոռիս ներկայացուցիչը, մասնակցելով Մերձավոր Արևելքի հարցերի քննարկմանը, նշեց. «Հայ Եկեղեցին, որպես պատերազմների արհավիրքներից աշխարհում հավանաբար ամենաշատ տառապած ժողովրդի Եկեղեցի, մշտապես հան-

դես է եկել խաղաղության պաշտպանության դիրքերում: Հայ Եկեղեցու ընդհանրական պետը՝ Վազգեն Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսը, միջազգային համաժողովների ամբիոնից բազմիցս ձայն է բարձրացրել աշխարհի խաղաղության ամրապնդման օգտին: Այսօր մենք խիստ մտահոգված ենք, որ Պաղեստինի արաբ ժողովրդի ողբերգությունը, Լիբանանում ավեր սփռող քաղաքացիական կռիվները, իրանա-իրաքյան ապարդյուն զինաբախումը, Կիպրոսում տիրող պայթուցիկ իրավիճակը,—այս բոլորը կարող են մի օրից մյուսը պատճառ դառնալ ընդհանուր առճակատման և աներավոր հետևանքներ ունենալ համայն մարդկության համար»:

Այնուհետև խոսքը մասնավորելով Լիբանանի և լիբանանահայության մասին, Մայր Աթոռիս ներկայացուցիչը շարունակեց. «Այս պահին, երբ մենք այստեղ խոսում ենք խաղաղության մասին, Լիբանանում վերստին արյուն է հոսում: Դա խորապես տխրեցնում է մեզ: Աշխարհում հավանաբար չկա մի հայ, որ անտարբերություն ցուցաբերի այն ամենի նկատմամբ, ինչը տարիներից ի վեր բգկտում է այդ գեղաձիծաղ, ասպնջական երկիրը: Ավելի քան երկու հարյուր հազար շուն հաշվող Լիբանանի հայկական համայնքները մշտապես ազնվորեն ծառայել են, այսօր էլ ծառայում են իրենց երկրորդ հայրենիքի բարգավաճմանը: Սակայն չնայած որ հայերը կռվող կողմ չեն, պահպանում են դրական չեզոքություն, արդեն երկու անգամ ենթարկվել են հետադիմական մոլեռանդ տարրերի հարձակմանը, տվել են զգալի թվով զոհեր, կրել են նյութական խոշոր վնասներ: Այսօր, երբ եղբայրասպան կռիվները վերսկսվել են, Բեյրութի հայաբնակ թաղերի գլխին վերստին կախված է կոտորածի և ավերածության վտանգը: Բոլոր բարի կամքի տեր մարդկանց պարտքն է՝ գործադրել հնարավոր ամեն միջոց, որպեսզի Լիբանանում վերահաստատվի անվտանգությունն ու խաղաղությունը:

Նստաշրջանի վերջում ընդունվեցին մի շարք բանաձևեր, որոնցում հանրագումարի են բերված մտքերի փոխանակության ժամանակ հավանության արժանացած տեսակետները:

Աշխատանքային կոմիտեի նստաշրջանի ավարտին միտրոպոլիտ Ֆիլարետը ճաշկերույթ տվեց նրա մասնակիցների պատվին: